ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի

2024թ. մայիսի 23-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 26-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Հայկյանց):

2. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի վարիչի ընտրություն:

3. Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Հարությունի Գաբուզյանին «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» պատվավոր կոչումը շնորհելու մասին:

4. 2023-2024 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների ամփոփում (զեկ.՝ սահմանադրահիրավական և քրեահիրավական մասնագիտացման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահներ):

5. 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային պլանի հաստատում:

6. ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Շուշանիկ Ղուկասյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

7. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Հայկյանց):

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոնի վարիչներն ամփոփ տեղեկություններ ներկայացրին ավարտական աշխատանքների պատրաստման ընթացիկ վիճակի մասին՝ արձանագրելով հնարավոր խնդրահարույց դեպքերը, առկա խնդիրները լուծելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Հ.Խաչիկյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի վարիչի ընտրության մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը հայտնեց, որ ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել է նույն ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Աննա Ռազմիկի Մարգարյանը:

Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնի համար Ա. Մարգարյանի թեկնածությունը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով խորհրդի նախագահ Հ. Խաչիկյանի առաջարկով ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ ի.գ.դ., պրոֆեսոր Սերգեյ Առաքելյան (նախագահ), ի.գ.թ., դոցենտ Վարդուշ Եսայանի, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Լիանա Սերոպյան:

ԼՍԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 26-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը:

Քվեարկության արդյունքները հետևյալն են՝

Ա. Մարգարյանի օգտին քվեարկել է գիտական խորհրդի 26 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները,

2. Իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աննա Ռազմիկի Մարգարյանին համարել ընտրված ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնում,

3. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3. ԼՍԵՑԻՆ. Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Հարությունի Գաբուզյանին «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» պատվավոր կոչումը շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Արա Հարությունի Գաբուզյանը 1980-1986 թթ. սովորել է ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետում, որն ավարտելով՝ շարունակել է կրթությունն ասպիրանտուրայում: 1995 թ.-ին Արա Գաբուզյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 2007 թ.-ին ՝ դոկտորական ատենախոսությունը: 2011թ.-ին Արա Գաբուզյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1989 թ.-ից սկսած՝ Արա Գաբուզյանն աշխատանքի է անցել ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետում որպես դասախոս, իսկ 2000 թ.-ից սկսած ղեկավարում է ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնը: Որպես ամբիոնի վարիչ իր գործունեությունը ծավալած 24 տարիների ընթացքում Արա Գաբուզյանը մեծ ավանդն է ունեցել քրեական իրավունքի և կրիմինալոգիայի գիտությունների զարգացման, ԵՊՀ-ում նոր դասընթացների մշակմանն ու ներդրման, պրոֆեսորադասախոսական կազմի համալրման գործում: Արա Գաբուզյանի ղեկավարությամբ պաշտպանվել են 12 թեկնածուական ատենախոսություններ:

Գիտամանկավարժական ոլորտում գրանցած ձեռքբերումների համար 2013 թ.-ին Արա Գաբուզյանին շնորհվել է ՀՀ վաստակավոր իրավաբանի կոչում:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոնի վարիչի պարտականություններ վայր դնելու կապակցությամբ «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» պատվավոր կոչումը շնորհելու համար ԵՊՀ Գիտական խորհրդին առաջարկել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Հարությունի Գաբուզյանի թեկնածությունը:

4. ԼՍԵՑԻՆ. 2023-2024 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների ամփոփում (զեկ.՝ սահմանադրաիրավական և քրեաիրավական մասնագիտացման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ. 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային պլանի հաստատում:

Դեկան, պրոֆեսոր Հ.Խաչիկյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց ուսումնական պլանի և ձեռնարկվելիք քայլերի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

6. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Շուշանիկ Ղուկասյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Շուշանիկ Ղուկասյանին շնորհել դոցենտի գիտամանկավարժական կոչում:

7. Ընթացիկ հարցեր

7.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջ-նորդությունը՝ ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Ռոզա Առաքելյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Դիմել ԵՊՀ ռեկտոր Հ.Վ. Հովհաննիսյանին՝ միջնորդելու Հայ-Ռուսական համալսարանին՝ հաստատելու ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Ռոզա Առաքելյանի՝ «Արդարադատության միջազգային դատարանի վճիռների և որոշումների կատարման հիմնախնդիրները» վերտառությամբ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»:

7.2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Սերգեյ Ղազինյանի թեկնածուական ատենախոսության ղեկավարի փոփոխման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Ն.Այվազյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված ի.գ.թ., դոցենտ Ա.Մանասյանի փոխարեն ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Սերգեյ Ղազինյանի թեկնածուական ատենախոսության ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Հարությունյանին.

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

7.3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Դավիթ Թովմասյանին ԺԲ.00.05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությունից ԺԲ.00.04 «Դատական իրավունք» մասնագիտություն փոխադրելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Մարգարյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Դավիթ Թովմասյանին ԺԲ.00.05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությունից փոխադրել ԺԲ.00.04 «Դատական իրավունք» մասնագիտություն.

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ ***Հ.Խաչիկյան***

Խորհրդի քարտուղար ***Տ.Սուջյան***

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի կողմից 2023-2024թթ. ընթացքում

իրականացված ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին

Ձեր ուշադրությանն ենք ներկայացվում քաղաքացիական իրավունքի ամբիոնի կողմից 2023-2024թթ. ընթացքում իրականացված ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին ամփոփ հաշվետությունը: Խնայելով ձեր ժամանակը և չչարաշահելով ձեր համբերությունը՝ կաշխատենք այն ներկայացնել հիմնական մի քանի ուղղություններով առավել հակիրճ կերպով:

Հիմնական են համարվում՝ գործունեության ուսումնական և գիտական ուղղությունները, որոնց կողքին սակայն ուշադրությունից դուրս չեն մնա նաև այնպիսի հարակից ուղղություններ, ինչպիսիք են ամբիոնային աշխատանքների հանրայնացմանն ու միջազգայնացմանն ուղղված ջանքերը, գիտական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, որոնք ըստ էության նույնպես ուսումնական են և գիտական:

1.Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք

1.1.Դասախոսությունների անցկացման եղանակներ

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը շարունակել է աշխատանքները ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման և դրանց որակի կատարելագործման ուղղությամբ: Կախված թեմայի արդիականությունից, բարդությունից, պարզաբանման ենթակա հարցերի առանձնահատկությունից՝ դասախոսություններն անցկացվել են ինչպես ավանդական եղանակով, այնպես էլ ինտերակտիվ մեթոդներով: Ընդ որում, բոլոր դեպքերում օգտագործվել են դիտակտիկ նյութեր, սլայդներ և պրակտիկ օրինակների հիման վրա պարզաբանվել են գիտագործնական հարցերը:

Հաշվետու տարում սմարթ գրատախտակներով լսարանային զինումը նոր հնարավորություններ ընձեռեց դասախոսությունների անցկացման մեթոդների կիրառման հարցում: Համացանցային միջոցների կիրառմամբ դասախոսությունները դարձել են ավելի պատկերավոր, հասկանալի, օրենսդրական

իրավակարգավորումներին անմիջական հասանելիությունն օգնում է դասախոսությունների ժամանակ կենտրոնանալ ավելի շատ վերլուծականության, քան թե օրենսդրական կարգավորումների վերարտադրման վրա:

Ամբիոնային առարկաները հիմնականում ապահովված են ամբիոնի դասախոսների կողմից հեղինակված մայրենի լեզվով դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, դասախոսության տեքստերով, մեթոդական ցուցումներով, խնդրագրքերով, թեստերով, գործնական պարապմունքի նյութերով, ծրագրերով:

Ամբիոնի դասախոսներն ակտիվորեն օգտագործել են ուսանողներին տրամադրված էլեկտրոնային հասցեների ընձեռած հնարավորությունները և դասավանդվող առարկաներին վերաբերող նյութերը էլեկտրոնային ձևով՝ Moodl համակարգով տրամադրել են ուսանողներին:

Ամբիոնի գրեթե բոլոր անդամները զբաղված են պրակտիկ գործունեությամբ, ինչը թույլ է տալիս ոչ միայն գիտությունը տանել պրակտիկա, այլև թույլ է տալիս պրակտիկան բերել գիտություն, և այդ հենքով՝ ամբիոնի դասախոսների կողմից՝ ուսանողներին մշտապես փոխանցվում են պրակտիկ գիտելիքներ, գործնական հմտություններ, որի պարագայում ուսանողների իրավաճանաչողության մեջ ամրապնդվում է գիտություն-պրակտիկա կապը:

1.2. Սեմինար և գործնական պարապմունքների անցկացման եղանակները և մեթոդները

Հաշվետու ժամանակահատվածում առանձնակի ուշադրություն է դարձվել սեմինար և գործնական պարապմունքներին, հստակ խնդիր է դրվել սեմինար պարապմունքներին շեշտը դնել ուսանողների տեսական-գիտական իմացության խորացման վրա, նրանց կողմից գիտական նյութը համակարգված և հռետորիկ մակարդակով ներկայացնելու հմտությունների վրա, իսկ գործնական պարապմունքներին շեշտը դնել գործնական խնդիրների լուծման, դատական նախադեպերի վերլուծության, գործնական ուղղվածության փաստաթղթերի կազմման հմտությունների վրա:

Ամբիոնի առանձին դասախոսների կողմից (Շուշանիկ Ղուկասյան) սեմինար պարապմունքների ժամերի շրջանակներում կազմակերպվել են թեմատիկ գիտահետազոտական քննարկումներ, որոնց շրջանակներում արդարացված փորձ է կատարվել բարձրացնելու ուսանողների գիտահետազոտական հետաքրքրությունները:

Թեմատիկ հետազոտական քննարկումները հատկապես մեծ արդյունք են տալիս մագիստրատուրայում (Արմեն Հայկյանց):

Ուսումնամեթոդական ծրագրերի, հարցաշարերի, խնդիրների, տեստերի ստեղծում և նոր առարկաների ներդրում

<<Դատական իրավունք և փաստաբանություն>> մագիստրոսական ծրագրում, կատարվեց դասընթացների էական փոփոխություն, համապատասխանեցվեց ներկայիս աշխատաշուկայում եղած պահանջներին, հաշվի առնվեց նաև միջազգային առաջավոր փորձը,. 2023-2024 ուստարում ներդրվեցին նոր ուսումնական դասընթացներ, որոնք արդեն իսկ դասավանդվում են և ունենք ուսանողների մեծ հետաքրքրվածություն այդ դասընթացների նկատմամբ

- Քաղաքացիական իրավունքի տնտեսական ասպեկտները,

-Նոտարական գործունեության իրավական կարգավորումը ՀՀ-ում,

Մշակվել է նոր ուսումնական դասընթացներ, որոք ուսումնական շրջանառություն կմտնեն սեպտեմբերից.

-**Արհեստական բանականություն և իրավունք,**

- Գործարար էթիկայի հիմունքներ,

- Պայմանագրային բանակցություններ, պայմանագրի կնքումը և դադարումը,

-Անշարժ գույքի քաղաքացիաիրավական ռեժիմը,

- Միջազգային ընտանեկան իրավունք:

Ամբիոնի դասընթացները վարող դասախոսների կողմից կազմվել են ծրագրերը, նկարագրիչները և աշխատանքային պլանները:

Ամբիոնի կողմից բավական ակտիվ կերպով աշխատանքներ են տարվել ուսումնա-մեթոդական ծրագրերի վերանայման, ուսումնամեթոդական նյութերի կազմման ուղղությամբ: Հաշվետու տարում պատրաստվել և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտխորհրդի կողմից հրատարակության է երաշխավորվել «Մասնավոր իրավունք - թեստային առաջադրանքներ» ուսումնամեթոդական ձեռնարկը ամբիոնի ասիտենտներ ի.գ.թ. Շ.Ղուկասյանի Ա.Մութաֆյանի խմբագրությամբ: Մոտ օրերին կունենանք արդեն ձեռնարկի տպագրված անհրաժեշտ քանակը:

2. **Գիտահետազոտական աշխատանք**

2023-2024 թթ. ուս. տարվա ընթացքում ամբիոնի անդամների կողմից հրատարակվել են 20 գիտական հոդվածներ:

Հաշվետու տարին նախորդ տարիներին համանմանորեն՝ շարունակում է ակտիվ լինել ատենախոսական աշխատանքների կատարման մասով:

Մեկ ատենախոսություն ներկայում գտնվում է նախապաշտպանության փուլում:

Մեկ ավարտուն ատենախոսություն էլ գտնվում են ընթերցման փուլում:

Երեք ասպիրանտներ իրենց ասպիրանտական կարգավիճակի ավարտին՝ նախատեսում են ներկայացնել ատենախոսական աշխատանքներն արդեն ավարտուն տեսքով, որոնք կդրվեն նախնական քնարկման և նախնական պաշտպանության:

3. Կադրերի պատրաստում և վերապատրաստում

3.1. Ասպիրանտների, հայցորդների հետ տարվող աշխատանք

Ամբիոնի աշխատանքային ծրագրում հատուկ տեղ է զբաղեցնում գիտամանկավարժական կադրերի պատրաստումը: Ամբիոնն ունի 3 **առկա /2 ասպիրանտներ ավարտում են 2024 հունիսին/, 3 հեռակա ուսուցման ասպիրանտ և 1 հայցորդ**: Ամբիոնային ասպիրանտ/հայցորդներ իրենց գիտական զեկույցներով ակտիվորեն մասնակցում են ֆակուլտետում կազմակերպվող ամենամյա գիտական կոնֆերանսներին և հաջորդիվ ներկայացնում գիտական հոդվածներ տպագրության համար: Արդեն իսկ նշել ենք լավագույն փորձի մասին, որ ամբիոնային ասպիրանտներին ներգրավում ենք ուսումնա-գիտական նյութերի պատրաստման գործում, որը լավ փորձ է ապագա ուսումնա-գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ: Ամբիոնային ասպիրանտներին ներգրավում ենք ուսանողների հետ թեմատիկ քննարկումներ կազմակերպելու համար, որը և ասպիրանտներին է շահեկան՝ ապրոբացնելու իրենց ատենախոսական հետազոտության արդյունքները, և ուսանողներին է շահեկան՝ ծանոթանալու գիտական նոր մոտեցումների և արդյունքների:

Հաշվետու տարում ուսանողների հետ անհատական հանդիպումներ են կազմակերպվել իրավական հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ՝ ապահովագրության, կրիպտոարժույթների հիմնախնդիրներով:

Ընթացիկ տարում ԵՊՀ-ում ներդրվեց պրոֆեսորի օգնականի ինստիտուտը, որը կիրառվել է ամբիոնում երկու ասպիրանտների ներգրավմամբ, արդյունքները գոհացուցիչ են թե պրոֆեսորներին օժանդակության, և թե ուսումնական

գործընթացներում ասպիրանտների լրացուցիչ ներգրավվածության առումներվ: Հաջողված փորձը կշարունակենք հետագա տարիներին:

3.2. Ուշադրությունից դուրս չեն ամբիոնի դասախոսների վերապատրաստման հարցերը, որոնք արդեն կներկայացնենք ամբիոնային գործունեության հանրայնացման և միջազգայնացման բաղադրիչի շրջանակներում:

4. Ամբիոնը խրախուսում և աջակցում ամբիոնային աշխատանքների հանրայնացմանն ու միջազգայնացմանն ուղղված ջանքերը: Հաշվետու տարին բավական հագեցած է եղել այս ասպեկտով:

4.1. Ամբիոնային գործունության միջազգայնացման ուղղությամբ

Տաթևիկ Դավթյանը ս. թ. ապրիլի 26-ին մասնակցել է ԱՄՆ Վաշինգտոն քաղաքում հրավիրված «ASCE-2024» միջազգային գիտաժողովին, որը նվիրված էր գիտության անվտանգության հարցերին, և հանդես է եկել գիտական զեկույցով՝ ներկայացնելով հայրենական գիտության անվտանգության հիմնախնդիրներն ու դրանց լուծման հայեցակարգային մոտեցումները:

Արսեն Թավադյանը տնտեսական իրավունքին նվիրված դասախոսություններով է հանդես եկել Վարշավայի համալսարանում (Լեհաստան), Գալացի համալսարանում (Ռումինիա), Բիալիստոկի համալսարանում (Լեհաստան), Սալոնիկի համալսարանում (Հունաստան):

Քրիստինե Գաբուզյանը

- 2023թ. հոկտեմբեր, Ֆրանսիայի Հանրապետություն, Փարիզ – Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հակակոռուպցիոն ցանցի լիագումար նիստ,

- 2023թ., նոյեմբեր, Հունգարիա, Բուդապեշտ – Եվրամիության իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման գործակալության (CEPOL) TOPCOP (Ուսուցում և գործառնական համագործակցություն՝ ընդդեմ կազմակերպված հանցավորության) ծրագրի շրջանակում «Իրավապահ մարմինների համագործակցության մեխանիզմները» թեմայով ազգային ներկայացուցիչների աշխատաժողով

- 2024թ. փետրվար, Ֆրանսիա, Ստրասբուրգ – Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդ – Դատախազական համակարգերի կազմակերպում:

Միջազգայնացմանն ուղղված քայլեր են կատարվել ոչ միայն արտասահմանյան երկրների ուսումնագիտական հաստատություններ այցելելով, այլև օտարերկրյա մասնագետների հետ Հայաստանում համագործակցելով և կապեր զարգացնելով:

Ս.թ. ապրլին ԵՊՀ այցելած լեհ պրոֆեսորի հետ ամբիոնում ունեցել ենք հանդիպում - քննարկում, այնուհետև քաղաքացիական և միջազգային մասնավոր իրավունքի հարցերով կազմակերպվել է ուսանողների և դասախոսների հետ հանդիպում: Տպավորված լինելով հայաստանյան հանդիպումներից, լեհ պրոֆեսորը նույնիսկ Lincedin հարթակում իր տպավորություններն է կիսել հրապարկային կերպով և շնորհակալություն է հայտնել ԵՊՀ-ին: Այս հանդիպման մասով շնորհակալ դերակատարում ունեցան ամբիոնի դասախոս Շուշանիկ Ղուկասյանը, ասպիրանտներ Դավիթ Ղարիբյանը և Մանե Մարկոսյանը:

Ս.թ. ապրիլին ՌԴ Նախագահին կից Մասնավոր իրավունքի գիտահետազոտական կենտրոնը, ում հետ ունենք համագործակցության հուշագիր, գիտական կլոր սեղանի հրավեր էր արել ԵՊՀ քաղաքացիական իրավունք ամբիոնին,և այդ կլոր սեղանին մասնակցել են ամբիոնի դասախոս Արսեն Թավադյանը և ասպիրանտներ՝ Դավիթ Բակլաչյանը, Տաթև Մարտիրոսյանը, Կարեն Մելիքսեթյանը. Արսեն Թավադյանը հանդես է եկել նաև գիտական զեկույցով:

Գիտական հրավեր ենք ստացել ս.թ. հունիսի 23-24-ին ՌԴ Ս.Պետերբուրգ քաղաքում կազմակերպվող միջազգային իրավաբանական ֆորումին: Հնարավոր մասնակցության հարցերը դեռևս քննարկվում են:

4.2. Ամբիոնային գործունեության հանրայնացման ուղղությամբ՝

Ամբիոնային գործունեության հանրայնացման ինքնատիպ ուղղություն պետք է համարել ամբիոնի մի շարք անդմների պրակտիկ այլ գործունեությունը՝ դատական համակարգում, դատախազության համակարգում, նոտարական և արբտրաժային համակարգում, փաստաբանական համայնքում, մասնավոր սեկտորում:

Ամբիոնի մի շարք դասախոսներ ընդգրկվել են Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի արբիտրների ցանկում: Սա ենթադրում է ոչ միայն արբիտրաժային գործունության մեջ ներգրավվաժություն, այլև ներգրավվածություն կենտրոնի կողմից նախատեսվող վերապատրստման և գիտահետազտական ծրագրեի մեջ: Դրա իրականացման շատ լավ նախադրյալներ են ստեղծվել Արբիտրաժի և

հաշտարարության հայաստանյան կենտրոնի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի միջև ս. թ. ապրիլին ստորագրված Համագործակցության հուշագրով:

Ամբիոնի որոշ անդամներ ներգրվված են առանձին նախարարությունների կողմից իրականացվող ծրագրերում: Մասնավորապես, Շուշանիկ Ղուկասյանը՝

- որպես փորձագետ ներգրավված է ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմավորված աշխատանքային խմբում, որը պատասխանատու է «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրան կից նախագծերի փաթեթի մշակման համար:

- որպես փորձագետ մասնակցել է 2024-2026 թվականների ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրան կից միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքներին:

- որպես Եվրոպայի խորհրդի ազգային փորձագետ ներգրավված է երկու հիմնական ծրագրերում՝ «Աջակցություն Հայաստանում Պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագիր և «Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության ամրապնդումը» ծրագիր:

- 2023 թվականի հոկտեմբերի ամսին Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի համար անցկացվել է «Պայմանագրային իրավունք» թեմայով վերապատրաստման դասընթաց.

Ամբիոնի ասպիրանտ Տաթևիկ Մարտիրոսյանը, որպես փորձագետ, ներգրավված է արդարադատության նախարարության կողմից իրականացվող՝ նոտարական գործունեության թվայնացման ծրագրում:

5. **Ուսանողների և ասպիրանտների հետ տարվող աշխատանքներ**

Վերջում կցանկանայինք մի քանի խոսքով անդրադառնալ ուսանողության հետ տարվող աշխատանքներին, ինչը մեզ համար առաջնահերթությունների մեջ է: Խոսքը վերաբերում է ոչ թե ուսումնական ընթացիկ հարցերին, այլ արտաժամյա տարվող աշխատանքներին, որոնք իրենց էությամբ օրգանապես կապված են ուսումնական աշխատանքների հետ, և ոչ պակաս են նպաստում ուսանողների մասնագիտական կայացմանը:

Ուսանողների հետ արտաժամյա տարվող աշխատանքների մեջ առանձնահատուկ են դատախաղ-մրցույթներին նրանց մասնակցության ապահովումը, նախապատրաստումը, որոնք հիմնականում ապահովում են մրցանակային բարձրագույն տեղեր.

ա/ Հաշվետու տարում հերթական անգամ մեր ուսանողները հաղթական գավաթ ստացան Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակում ամենամյա ավանդական դատախաղ-մրցույթին, ընդ որում մրցանակային երկրորդ տեղում կրկին մեր ուսանողական մյուս խումբ էր:

բ/ Հայաստանի ամերիկյան համալսարանի՝ միջազգային առևտրային իրավունքի գծով ամենամյա դատախաղ-մրցույթում մեր թիմը գրավեց մրցանակային առաջին տեղը:

գ/ Ս. թ. ապրիլի 13-14-ի տեղի է ունեցել մտավոր սեփականության իրավունքին նվիրված դատախաղ-մրցույթի բանավոր փուլը, որը կազմակերպվել էր «Մտավոր սեփականության իրավաբանների ասոցիացիա»-ն՝ (AIPR) կողմից՝ «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի (AMCA) աջակցությամբ: ԵՊՀ-ն դատախաղին մասնակցում էր երեք թիմերով: ԵՊՀ երկու թիմերն ընդհանուր արդյունքներով կիսեցին 1-ին տեղը:

Ամբիոնային ուղղությամբ՝ հաշվետու տարում ունեցել ենք մասնակցություն միջազգային դատախաղ-մրցույթի.

«Վիլլեմ Ս. Վիս միջազգային առևտրային արբիտրաժ» դատախաղ-մրցույթում հայկական թիմերի մասնակցության առաջին անգամ Երևանի պետական համալսարանի թիմը Թբիլիսիում անցկացված մրցափուլի հաղթող է ճանաչվել՝ միավորների էական առավելությամբ զբաղեցնելով առաջին հորիզոնականը:

Ճիշտ է, Վիեննայում մեր թիմը մրցանակային տեղ չի զբաղեցրել, սակայն ԵՊՀ մասնակցության ապահովումն արդեն իսկ հաջողություն է՝ հաշվի առնելով, որ աշխարհի հարյուրավոր համալսարաններ նույնիսկ այդ մասնակցությունը չեն կարողանում ապահովել:

Հատուկ ցանկանում ենք շեշտել, որ Վիեննայի մեր թիմի հետ կազմակերպվել է հանդիպում ֆակուլտետի ՈՒԳԸ-ի հետ, ինչպես նաև մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների հետ, ովքեր անցել են միջազգային առևտրական իրավունքի դասընթացը, լուսաբանվել են միջազգային այս դատախաղին մասնակցության պայմանների, ընթացիկ հարցերի քննարկում, ինչը մեծ հետաքրքրությամբ է ունկնդրվել ուսանողների կողմից և ունեցել է բավարար ազդեցություն հաջորդ տարում

դատախաղի մրցույթին մասնակցելու հարցում. ուսանողների լայն արձագանքներն այդ մասին են վկայում:

Հաշվետու տարում ամբիոնի օգնությամբ և օժանդակությամբ՝ ՈՒԳԸ-ն կազմակերպել է երկու օլիմպիադաներ՝ քաղաքացիական իրավունքի և հռոմեական իրավունքի հարցերով: Օլիմպիադաների կազմակերպումը մեզանում լավ մոռացված հինն է, որն իսկապես արդյունավետ ուսումնագիտական մեթոդ է, որը պետք է խրախուսվի , և որի ուղղությամբ էլ շարժվելու է ամբիոնը հետագա տարիներին:

Քննադատական ասպեկտ:

Խորհրդի քննադատ ուշադրությանը ներկայացվեց քաղաքացիական իրավունքի ամբիոնի 2023-2024թթ. Հաշվետությունը, որով չի կարելի բավարարվել, քանի որ ցանկացած պարագայում միշտ հնարավոր է անել ավելին, քան արվել է: Սա ընդհանուր պոստուլատ է, որին միշտ պետք է ականջալուր լինել և փորձել անել ավելին՝ հաջորդության մեջ: Հաշվետու տարում ուսանողական հարցումներում հարցեր էին բարձրացվել սեմինար/գործնական խմբերի հաճախակի միացումների, առանձին դասախոսների բացակայությունների, քննությունների գնահատման տարբերակված մոտեցումների մասով: Շնորհակալություն հայտնելով ուսանողներին նման առողջ դիտարկումների համար՝ նշեմ, որ արդեն իսկ միջոցներ ձեռնարկվել են բարելավելու վիճակը, հասկանում ենք նաև դրա հիմնային պատճառները, այդպիսի դրսևորումները վերցնելու համար համալիր և ժամանակատար միջոցներ պետք է ձեռնարկվեն, և այդպիսիք ձեռնարկվում են:

Լուրջ անելիքներ ունենք գիտական հոդվածները Scopus և Web of science միջազգային համակարգի ամսագրերում տպագրելու համար, որը ոչ միայն միջազգայնացման հեռանկարներ կբացի, այլև հնարավորություն կընձեռի համալսարանական ներքին գրանտների համար դիմելու: Պետհամալսարանը տարեցտարի մեծ հնարավորություններ է ընձեռում ներքին գրանտների մասնակցելու, որոնք ի դեպ բավական շոշափելի բյուջե ունեն, և որին չմասնակցելու խոչընդոտներից մեկն էլ մասնակիցների հոդվածների բացակայությունն է Scopus և Web of science համակարգի ամսագրերում: Այս խնդիրն իհարկե միայն քաղաքացիական իրավունքի ամբիոնին չի վերաբերում, վերաբերում է ողջ ֆակուլտետին, ինչի մասին է վկայում

համալսարանի կայք-էջում իրավագիտության ֆակուլտետից գրանտներ ունենալու վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը:

Նշվածով հանդերձ՝ պետք է ասել, որ բերված մտահոգությունները միայն ամբիոնային ուղղվածության չեն, այդպիսիք ընդհանուր-համակարգային են, այստեղ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել հատկապես և առավելապես ֆակուլտետային և համալսարանական մակարդակներով:

Այսքանով թույլ տվեք սահմանափակվել , և եթե չեմ քննարկել առանձին հուզող հարցեր, պատրաստ եմ դրանց անդրադառնալ հնարավոր հարցադրումների շրջանակներում:

Շնորհակալություն ուշադրության համար: